

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՏԱՐԵԿԱՆ ՆՈՒԻՐԱՀԱԻԱՔԻ ԱՌԹԻԻ

ԱՐԵՒՍՏԵԱՆ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ՝
ԳԵՐՇ. Տ. ՅՈՎՆԱՆ ԱՐՔ. ՏԵՐՏԵՐԵԱՆԻ
ՍՐՏԱԳԻՆ ԿՈՋԸ ԹԵՄԻՍ ՀԱԻԱՏԱՑԵԱԼՆԵՐՈՒՆ

Աստուծոյ օգնականութեամբ «Հայաստան» Համահայկական Հիմնադրամը դարձաւ նոր օրհնութիւն մը մեր ազգի կեանքին մէջ, որուն միջոցով բոլորս ալ մեր հոգիի պարտքը կը կատարենք Հայրենիքի վերակերտման սրբազան ու նուիրական ճանապարհին:

Մեր սրտագին կոչն է, որ մեր Թեմի հաւատացեալներն ալ իրենց մասնակցութեամբ պօրավիճ կանգնին յաւերժական Մայր Հայաստանին, որպէսզի հայրենիքով Արցախեան հողը շարունակէ դառնալ ապարտութեան խորհրդանիշը մեր ազգի բոլոր պաւակներուն համար:

Գոհաբանութեան Օրը իմաստաւորող հրաշալի առիթ մըն է «Հայաստան» Համահայկական Հիմնադրամին մասնակցելու առաքելութիւնն ու աւանդութիւնը: Այս փարուան նուիրահաւաքի գումարը պիտի յարկացուի Շուշիի վերակերտման նուիրական գործին: Երախտապարտ ենք, որ ազգային այս առաքելութեան յաջողութեան համար նուիրահաւաքին կը մասնակցին պետական բարձրաստիճան պաշտօնեաներ, Հայաստանի Հանրապետութեան Լոս Անճելըսի Գլխաւոր Հիւպատոս՝ Տիար Գրիգոր Յովհաննիսեան, Արցախի Հայց. Եկեղեցւոյ Թեմի Բարեխնամ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Պարգեւ Արք. Մարտիրոսեան եւ յարգարժան ա՛յլ հիւրեր:

Սիրելի հայորդիներ, «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի մասնակցութեամբ մենք մեր ինքնութիւնը կ'ամրապնդենք եւ անփարակոյս հաստատ պարգամ մը կը յղենք աշխարհի բոլոր ժողովուրդներուն, որ մեծ Եղեռնի նահատակներուն հոգիները կը շարունակեն առաջնորդել մեր կեանքը յանուն արդարութեան: Որքա՛ն մեր կեանքը զոհաբերենք մեր նախնեաց արեամբ նուիրագործուած Հայաստանին եւ ապարագրուած Արցախին, այնքան կ'իմաստաւորենք Աստուածափոխ մեր կեանքը: Որքա՛ն մեր կեանքը կը դարձնենք նպատակ վասն Յիսուսի եւ վասն հայրենեաց, այնքա՛նով ալ աւելի մեր պաւակներուն կեանքը կը լուսաւորենք ապագայի յստակ հեռանկարով, յոյսերով եւ երապներով:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄԵՐ ԲՈՒՆՈՒՆ ՀԱՅՐԵՆԻՔՆ Է:

Հայաստանը իր պատմական անցեալով ու անցեալը ներկային մէջ նոր պարգամի վերածելու սրբազան ու սեպուհի պարտականութիւնը մեր կեանքի առաքելութիւնն է: Հայաստանը ներկայացնող ռզեղէն ու լուսեղէն մանրակերպը Սուրբ Էջմիածինն է, որուն մէջ խտացած է մեր ազգին էութիւնը բոլոր ժամանակներով, պարմութեամբ ու գալիքի երապներով: Հայաստանը մեր հաւատարմը դարձնենք «Հայաստան» Համահայկական Հիմնադրամին մեր մասնակցութեամբ:

Մենք արդէն իսկ պաշտօնական մեր կոչը ուղղած ենք Թեմիս բոլոր Եկեղեցիներուն եւ հաւատացեալներուն: Կը յուսանք Աստուծոյ Օրհնութեամբ եւ համայն հայութեան մասնակցութեամբ, անգամ մը եւս յաջողութեամբ կը պսակուին բոլորիս ազգանուէր ջանքերը: